



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առևտելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԺ. Լ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ



ԻՆՉՈՒ ՑԵՆ ՅԵՐԵՒԱՆԵՐՆ ԱՎԵԼԻ
ՃԱՏ ՄԵՌՆՈՒՄ



ՊԵՏԱՐԱՍ

1930

ՅԵՐԵՎԱՆ


ԲԺ. Լ. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

613.99

2

ԻՆՉՈՒԻ ՑԵՆ ՅԵՐԵՒԱՆԵՐՆ ԱՎԵԼԻ
ՃԱՏ ՄԵՌՆՈՒՄ

A 3923



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1929

Հիմու. № 1106

ԹԵՏՐԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հիմունեա. № 2824(բ)

Տիրամ 3,000

Պատ. 1116

ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆ ՅԵՐԵՒԱՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԵՌՆՈՒՄ

Մեր մեջ կա դեռ մի հին խոսք. «Դա աստծու բանն ե, աստված տվավ, աստված ել տարավ»—այդպէս են ասում մեր պառավները և հին մարդիկ:

Տունը այրվեց, կովը սատկեց, մայրը մեռավ, յերեխան մեռավ... «Են, ի՞նչ անենք, աստված տվել ե, աստված ել տարավ»—ասում ե գյուղացին:

Հիմա այդպէս մտածողների թիվը պակասել ե, բայց դեռ շատ յետ մնացած մութ գյուղեր կան, ուր շարունակում են այդպէս մտածել և ասել: Ցեթե հետաքրքրվեք և գյուղում բոլոր ընտանիքները մեկ-մեկ քննեք, կտեսնեք, վոր ընտանիք չկա, վոր միքանի մանուկ չլինի թաղած, և շատերը լուսում են և կարծում, թե դա աստծու գործն ե:

Դա սխալ ե: Այդպէս չպետք ե կարծել. պետք ե իւանալ, վոր մանուկների մահը ունի շատ ու շատ պատճառներ: Պատճառներ, վորոնք մենք կարող ենք գոնե մասամբ վոչնչացնել:

Մարդն ընթը զորեղ ե. ամեն բանի դեմ պարքարել կարող ե. ինչու մանուկներին չի կարող պաշտպանել հիվանդություններից և մահից.

Պառավները, վոր արդեն իրենց տարիքը անց են կացրել, վոր ապրել են 60—70 տարի, նրանք նույնիսկ մեռնում են 10 անգամ ավելի քիչ թվով, քան մեր մանուկները։ Բայց չե՞ վոր մանուկը դեռ չի ապրել։ Նա դեռ նոր պետք է ապրի։ Թիչ չեն այն մանուկները, վոր ծնվել են վորեւ պակասություններով, վորի պատճառով ել հենց առաջին որը մահացել են։

Ավելի մեծ է այն մանուկների թիվը, վորոնց մահվան պատճառն են դառնում մոր տղիտությունը, տատմերը, հեքիմը կամ ծնողների ծանր հիվանդությունները և հարբեցողությունը։

Յեթե հենց սկզբից քննենք այդ հարցը, կտեսնենք, վոր մանուկը դեռ մոր արգանդում մեծ պահանջներ ունի։ Յեթե մայրը հղիության ժամանակ ծանր աշխատանք է կատարում, իրեն մաքուր չի պահում, բժեկին չի դիմում հղիության մասին խորհուրդներ ստանալու, իրեն նիվանդությունները չի բժեկում, նրա մանուկը կամ վաղաժամ է ծնվում, կամ նիհար ու նիվանդու է լինում։

Այստեղ մեծ նշանակություն ունի և այն հարցը, թե ինչ հասակում կարելի յետմուսնաց-

նել աղջկանը: Յեթե աղջիկը շուտ ե ամուս-
 նանում, դեռ ամրացած չի լինում, նրա կոնքը
 լավ չի զարգացած, և հաճախ արդպիսի դեպ-
 քերում վտանգի լեն յենթարկվում և մարը, և
 ծնող յերեխան հենց ծննդաբերության ժամա-
 նակ: Այդ պատճառով ել ներկայումս որենս-
 դրությունը թույլ չի տալիս աղջկան ամուսնա-
 նալ 16 տարեկանից շուտու: Բայց պետք ե ասել,
 վոր 16 տարեկանն ել այնպես լրիվ չի զարգացած,
 վոր հետագայում չտուժի: Ամենից լավ ե 18
 տարին լրանալուց հետո ամուսնանալ: Ինչ վե-
 րաբերում ե ծնողների հիվանդությանը, պետք
 ե ասել, վոր սիմֆիլիսով նիվանդ ծնողները կա-
 րող են կենդանի կամ առողջ յերեխա ունենալ
 միայն այն ժամանակ, յերե իրենիք բժշկվել են:
 Հակառակ դեպքում հիվանդ մայրը հաճախ վի-
 ժում ե ունենում, կամ մանուկը սիմֆիլիսով
 հիվանդ ե ծնվում: Չբժշկվող, իրենց հիվան-
 դությունը թագցնող ծնողները կարող են լնդ-
 միշտ զրկվել յերեխա ունենալու հնարավորու-
 թյունից: Շատ վատ ե ազդում ժառանգության
 վրա և հարբեցողությունը: Հարբեցողի յերեխան
 թույլ և հիվանդությունը: Հարբեցողի յերեխան
 թույլ և ծնվում, շատ ժամանակ
 ել ավելի լուրջ հիվանդություններ են առաջա-
 նում: Այս բոլոր պատճառները զյուղում հա-
 ճախ աչքաթող են արվում: Քաղաքում դուք

այլ բան կտեսնեք։ Այստեղ մահուկներն ավելի քիչ են մահանում։

Ինչո՞ւ քաղաքում մանուկն ավելի քիչ ե նիվանդանում, իսկ զյուղում շա։

Վորովհետև քաղաքում ծնողներն ավելի գրագետ են, մայրը գիտե, թե ինչպես պետք է կերակրել և խնամել մանկանը։ Իսկ ուղիղ ունունդը և խնամքը մեծ նշանակություն ունեն մանկան համար։ Ոյդ հարցում քաղաքի մորն ոգնուժ են կոնսուլտացիան և մեծ թվով բժիշկները և մասուրները։

Իսկ ինչ ենք տեսնում մենք գյուղումը։ Այեն տեղ տառակերներն են բժշկի դեր խաղում։

Ծնունդ ե, հիվանդություն ե, հարսանիք ե, ամեն տեղ պառավի խոսքը պիտի անցնի։ Հներում դա ավելի ուժեղ եր, իսկ հիմա պառավների իրավունքները պակասել են, թուլացել։ Բոլորդ պետք ե մասնակցեք տատմերներին արմատախիլ անելու հարցում։ Ժամանակ ե արդեն, պեսք ե վերջ Տալ Տամոր մոտ խորհրդի գնալուն։ Զե՞ վոր դուք մանկաբարձուհի ունեք։ Մոտավոր գյուղում բժիշկ ունեք։ Տարեք ձեր հիվանդին բժշկի մոտ, պահաջեք և աջակցեք կունսուլտացիա բացելու։

Զեզնից շատերը յերեխ գիտեն, թե ինչ ե կոնսուլտացիան։ Բայց կարող են գտնվել և այն-

պիսիները, վոր չիմանան։ Այ, որինակ՝ Յերևանում
կան գեռ մալլեր, վոր ասում են, թե՛ կոնսուլ-
տացիան կաթ բաժանելու տեղ ա։

Դա, ինարկե, սխալ ե. կոնսուլտացիան կա-
րող ե կաթը տալ թույլ մանուկներին, բայց
նրա գլխավոր նպատակը դա չե։ Կոնսուլտացիա
նշանակում ե սի հիմնարկություն, ուր ամեն
մի մայր կարող ե խորհուրդներ ստանալ։

Կոնսուլտացիան սովորեցնում ե, թե ինչ-
պես մեծացնել յերեխային, վոր մենք ապագա-
լում ունենանք առողջ սերունդ, վոր մեր յե-
րեխաները չհիվանդանան և չժեռնեն։

Վորպեսզի ապացուցեմ, վոր կոնսուլտա-
ցիան մեռնող յերեխաների թիվը պակասեցնում
ե, յես պետք ե մի որինակ բերեմ Հայաստանի
կյանքից։ Յերևանում 6 տարի յե, ինչ գոյու-
թյուն ունի մանկական կոնսուլտացիա. և ի՞նչ ե
արել այդ կոնսուլտացիան։

Նրա թվերն ասում են հետևյալը։

Կոնսուլտացիան կանոնավոր հաճախող մա-
նուկների մեջ 100-ից մեռնում են 6—7-ը, իսկ
այն մանուկների մեջ, վորոնք չեն հաճախում
կոնսուլտացիա, մահանում են 100-ից 14—15-ը։
Համեմատեցեք թվերը և կտեսնեք, վոր կոնսուլտա-
ցիայի մանուկները յերկու անգամ թվով քիչ են
մեռնում, քան քաղաքի չհաճախող մանուկները։

Ահա ձեզ պարզ ապացուց, վոր աստված այստեղ դեռ չի խաղում։

Վերջնենք մի ուրիշ որինակ. կան ոտար պետություններ, ուր 100 մանուկից մահանուժ են 4—5-ը, ի՞նչ ե, աստված նրանց յերեխաներին ավելի շատ ե սիրում։ Վոչ, այստեղ աստծու հարց չե։

Նշանք կուլտուրապես ավելի բարձր են կանգնած, նրանց մայրերը մեծ թվով գրազես են, նրանց մեջ ողարտադիր ե դպրոց գնալը, նրանց տամերներին լսող չկտ... Ահա թե ինչն ե պատճառը։

Ամեն մի գործ զիսություն ե պահանջում։ Որինակ՝ բոստանչին պետք ե իմանա վոնց ցանել, ջրել, խնամել կաղամբը, վարունգը, բողկը, գաղարը և ուրիշ բանջարեղեն։

Գյուղացին գիտի՝ ինչպես հողը մշակել, ցուրեն, գարի, կարտոֆիլ ցանել։

Իսկ մայրը չգիտի իր մանկանը կերակրելու, մեծացնելու ձեւ։ Նա պետք ե այդ գիտությունը ձեռք բերի, վոր իր առողջ յերեխային նայելով ուրախանա, պարծենա։

Պառավերն ել մեկ-մեկ փորձում են պարծենալ. «Այ ինչ տղերք ունեմ, վոչ բժիշկ են տեսել, վոչ կոնսուլտացիա, պակամա են մեծացել։ Բա մենք վոնց ենք արել առանց բժշկի. սադ լինեն մեր տատմերները»։

Ի՞նչ պետք եւ պատասխանի խելացի ջահել
մայրը։ Այդպիսի պառավերին պետք եւ խոր-
հուրդ տալ, վոր անցնեն զերեզմանները յեվ հաշ-
վեն, թե ծնվածներից բանիսին են քաղել։

Շատ են այն մայրերը, վոր հղիացելեն և ծնել
10—12 անգամ, իսկ ունեն կենդանի մեկ կամ
յերկու յերեխա։ Դա իրավունք կտա նրանց պար-
ծենալու յերկու յերեխայով։ Ինարկե վոչ։

Յես հայողված եմ, վոր յեթե այդ պա-
ռավերի ջահել ժամանակը լինելին այն թվով
մանկաբարձուհիներ, կոնսուլտացիաներ և բը-
ժիշկներ, ինչպես հիմա, յերեկի 1—2 յերեխայի
տեղ նրանք կունենացին 8—9 յերեխա։

Յերեանի կոնսուլտացիան ունի շատ մայրեր,
վոր ովարծենալով հայտնում են սրան։ նրան։ «5—6
յերեխա յեմ ունեցել, բոլորն ել մեռել են. այս վեր-
ջին յերեքն ապրեցին շնորհիվ կոնսուլտացիալի»։

Պետք եւ այստեղ մի բան շեշտել, վոր գոնե
Յերեանում շատ կան հին պառավեր, վոր կա-
մաց-կամաց խելքի յեն գալիս։ Կան պառավեր,
վոր սկսում են իրենց աղջկա կամ հարսի հետ
այնպես պահել յերեխային, ինչպես կոնսուլտա-
ցիան եւ խորհուրդ տալիս։ Նրանք տեսնելով
նորը, լավը և համոզվելով, վոր հարեանի յերե-
խան կոնսուլտացիայում առողջացավ, իրենք ել
սկսում են լսել և հավատայ։

Գեղջկուհին բաղաքացուց ավելի լավ դիտե,
վոր վոչ սի բույս, վոչ սի բանջարեղեն առանց
արեվի լավ չի բուսնի:

Նա պետք ե իմանա և այն, վոր մանկանն
ել ե հարկավոր մաքուր ոդ, արեվ յեվ լույս
Առանց լուսի և արենի մանուկը լավ զարգանալ
չի կարող:

Շատ մայրեր լերեխալի որորոցը դնում
են ամենից մութ անկյունում, վոր լուսը չընկնի
լերեխայի աչքերին: Այդ բավական չի, յերեխալի
աչքերն ել ամուր կապում են չամբարով:
Դրանով ել չեն բավականանում՝ որորոցի վրա
յել մի մեծ ծանր շոր են դցում, վոր լուսը
տակը չանցնի:

Դա մեծ սխալ ե և ահա թե ինչու:

Առհասարակ հիվանդությունը սիրում է
թազնվել մութ ու խոնավ անկյուններում: Աս-
ված ե, վոր «այն տունը, վորտեղ արեվը չի
մտնում, բժիշկն ե հանախ լինում:

Բացի դրանից մութ անկյունը խոնավ / ու
ցուրտ ե լինում:

Մանուկը ամիսների ու տարիների ընթաց-
քում մնալով այդ հիվանդու անկյունում, թոռո-
մում ե, ինչպես ծաղիկն առանց արենի: Իսկ չե՞
վոր կյանքի հիմքը մանկությունն ե. «Ինչպես
սկսես, այնպես ել կգնա»—ասում ե առածը:

Վատ զարգացած մանուկը կլանքում շատ ե հիվանդանում և շուտ մահանում:

Յեթե ուզում եք նրան պաշտպանել ճանձերից և մոծակներից, ծածկեք նրա մահճակալը թեթև թանգիֆով, վորի արանքներով ողը կարսդանա անցնել: Ծանր, խիս գործված ուրը խանգարում ե յերեխայի շնչառությունը: Նրա միջով արեվը չի անցնում:

Ամեն որ բացեք ձեր դոները կամ լուսամուտները յեվ բողեք սենյակի ողը մաքրվի:

Ամառը յերեխային արեից մի պահեք: Դրեք գլխին մի բարակ գլխարկ և թողեք ամբողջ որը մաքուր ու բաց ողում: Մեծերն ել են մաքուր ողի կարիք զգում, ուր մնաց մանուկը: Վորքան յերեխային քամին շատ ծեծի, և արել շատ ալրի, այնքան նա առողջ կլինի:

Առողջ յերեխան չի հիվանդանում և չի մահանում:

Շատ գլուղերում տավարը, կովը, ձին, շունը, հորթը, խոզը և հավերը պահում են նույն սենյակում, ուր իրենք են քնում:

Ի՞նչ ե ստացվում: Կենդանիների շունչը, հոտը, նրանց կեղտոտությունը, լուն ու նրանց զանազան հիվանդությունները վարակուժ են ամբողջ խրճիթը: Այդ ողում ազատ շունչ քաշել չի լինում: Ճնշված փչացած ողն ազդում ե մարդու

թոքերին։ Ավելի լեն ազդվում յերեխայի փոքր
և թույլ թոքերը։

Ասված ե՝ գորտեղ սգիտություն յեվ կեղ-
տուություն, այնուեղ ե յեվ բոխախոր։

Թոքախտը չքավորի թշնամինն ե. պետք ե
նրան հալածել և թույլ չտալ, վոր նա մտնի մեր
տները և տանի մեր յերեխաներին։

Քիչ չեն այն տները, ուր դուք ձմեռը կը-
տեսնեք դարսած չորացրած աթարը (տարթը),
վորի հոտը լցնում ե ամբողջ խբճիթը։ Ռուսաս-
տանի թվերը ցուց են տալիս, վոր սենյակների
թիվը յեծ նշանակություն ունի առողջության
համար։ Այնտեղ, ուր ընտանիքը 4—5 սենյակ
ունի, յերեխաները քիչ են մեռնում. ուր ըն-
տանիքն ունի 1—2 սենյակ, այնտեղ յերեխաներն
ավելի շատ են մեռնում։

Այ թե ինչ նշանակություն ունի սենյակը
և նրա մաքուր ողը։

Մեր պայմաններում մտածել 4 5 սենյակի
մասին դժվար ե և պետք ե բավականանալ նրա-
նով, ինչ ունենք։ Բայց ունեցած սենյակի ամե-
նալավ, լույս յեվ չոր անկյունը պեսք ե հատ-
կացնել մանկանը։ Այդ ունեցած 1—2 սենյակը
պեսք ե ավելի մաքուր պահել՝ ամեն որ սրբել,
բայց վոչ չոր ավելով, այլ խոնավացրած։ Յեթե
հատակը տախտակից ե, կորելի յե խոնավ շորով

սրբել, վորապեսզի փոշի չբարձրանա։ Աեղանի, աթոռի, պատերի և ուրիշ իրերի փոշին պետք եղարձյալ թաց շորով սրբել։ Ուտելեղենը և ամանեղենը պահել փակ, վոր փոշին և ճանձերը չկեղտոտեն նրանց։ Թույլ չտաք սենյակում հատակին թէել. թուքը չորանում ե, փոշի դառնում և ողը վարակում։ Յերեխաները չոչ անելով (սողալով) կարող են իրենց ձեռքերով ու շորերով հավաքել ալդ կեղտը և բերանը տանել ու վարակվել։

Նոր ծնվածներին շատ ժամանակ, մինչև «քառասունքը» չըրանա, տնից դուրս չեն բերում։ Ասում են՝ կմրսի կամ կմեռնի։ Պետք են հակառակը ասել։ Յեթե մանկանը ծնված որից մաքուր ողի չսովորեցնես, նա հաճախ կհիվանդանա։

Պետք են մեկ շաբաթական հասակից կամաց-կամաց դուրս բերել յերեխային։ Առաջին որը դուրսը պահել միքանի ըոպե, յերկրորդ որը՝ ավելի շատ և այդպես որեցոր ավելի յերկար ժամանակ մնալ դուրսը, միայն սաստիկ քամուն և թաց յեղանակին դուրս չբերել։ Մի՛ վախենաք մաքուր ողից յեվ արեվից։

Դուրս բերելիս յերեխային կարելի է տաք հազցնել, իսկ ներսը—սենյակում կարիք չկա։ Մանավանդ ամառը յերեխային պետք են հազցը-

նել մեկ շապիկ ու վարտիք և ուրիշ վոչինչ:
Շոգ յեղանակին յերեխան շուտ ե տաքանում,
և այդ տաքությունն ուժեղացնում ե նրա հի
վանդությունը:

**Մանավանդ փոշհարինքի ժամանակ պետք ե
զգուշ լինել շատ հազցնելուց:**

Դատ սահ հազնված յերեխան դժվար ե
մարսում կերակուրը: Բացի արդ, ամուռ կապած
յերեխան վատ ե զարգանում, հաճախ մաշկի
հիվանդություն ե ստանում, քրտնում: Իսկ քըրտ-
նող յերեխան ավելի հաճախ ե հիվանդանում,
քան ազատ պահած յերեխան:

Այստեղ պետք ե հիշեցնեմ և նրա մասին,
վոր շատ մալքեր յերեխալի աճուկներում և թևի
տակը ցանում են ավազ-հող: Հաճախ ել յերեխա-
լին հենց բոված հողի մեջ են պահում: Դա վատ
և վնասակար սովորություն ե: **Այդպես պահված**
յերեխաները թույլ են լինում, հաճախ են հի-
վանդանում. ավազը ծծում ե իր մեջ մեզը, և
լեթե ամեն անգամ նոր ավազ չենք վերցնում,
սաստիկ վատ հոտ ե զալիս յերեխալից և փա-
թաթաշորերից: Իսկ այդ կեղտոտությունը կա-
րող ե մաշկի հիվանդություններ առաջ բերել:

**Ավազի փոխարեն պետք ե յերեխային փո-
չի (պուդրա) ցանել:**

Ասում են, վոր յերեխայի վոտերն աժուր

Հկապես—ծուռ կլինեն։ Դա սխալ ե. ընդհակառակը, կապված յերեխայի վոսկրեները լավ չեն մեծանում, ծուռ են լինում, իսկ կուրծքը նեղ ե մնում. Նեղ կուրծքը վատ ե։

Շատ ե խանգարում յերեխայի զարգացման և ճոճը. նա սղմում ե յերեխային, խեղդում ե շունչը և քրտնացնում։

Բացի դրանից ճոճը վտանգավոր ե. հաճախ յերեխան ընկնում ե ճոճից և մահանում։

Այդպիսի յերկու դեպք յեղել ե Յերևանի կոնսուլտացիա/ի յերեխաների հետ 1923 թվին։

Այդ դեպքից հետո շատ մայրեր շալրակցին իրենց ճոճերը։

Հայկական որորոցն իր շիբերով նույնպես մնաս ե յերեխային. Յեթե որորոցում յերեխալին ամուր չկապես, նա կախ կլինի կամ կլնկնի։ Յեթե ամուր կապեք, յերեխան ե ճնշվում։

Ի՞նչ անի չքավոր գյուղացին, վոր մահճակալ չի կարող առնել։ Թող ձեռք բերի մի տաշտակ կամ տախտակե արկղ և նրա մեջ պահի իր յերեխային։ Դա և եժան ե, և անմնաս։ Յերեխան տաւակի մեջ իրեն տգատեզգա։ Միայն պետք ե հիշել, վոր այդ տաշտակում լվացք անել չի կարելի։

Որորոցի շիբեքը (լոլակը) կեղաստվում են մեղից և հետո զանազան հիվանդություններ

առաջ բերում։ Ավելի լավ ե միքանի փաթարացոր ավել ձեռք բերել, քան յերեխային հիվանդացնել։

Շատ գյուղացիք ամեն ինչ կառնեն, բայց յերբ հարցը սապոնին ե հասնում—դրա համար փող չի ճարվում։ Ով այդպես անի, նա վերջը կփոշմանի։

Միզոտ, կեղտոտ, անլվա շորերը հաղար ու մի հիվանդություն են առաջ բերում։

Բժիշկը, դեղորայքը, ճանապարհի և այլ ծախսերն ավելի թանգ են նստում գյուղացու վրա, քան միքանի կտոր սապոնը և մաքուր ապրելը։

Մոր հետ մեկ տելողնում չպես ե քնացնել յերեխային։ Առաջինը՝ դա վտանգավոր ե. քիչ չեն այն դեպքերը, յերբ մայրը արթնանում ե և իր կողքին քնած յերեխային գտնում ե մեռած։ Ինչպես ասում են, «մայրը յերեխային տակով» ե անում։

Իսկ յերկրորդը՝ յերեխայի համար ծանը ե շնչել մոր քրտնքի հոտը և մոր շունչը։

Բացի դրանից յերբ յերեխան մոր ծոցումն ե, նա անվերջ ծծում ե, իսկ դա վնաս ե և մոբը, և յերեխային։ Կան մայրեր, և մանավանդ պառավներ, վոր իրենց առողջ հաժարելով, ծամում են հացը, շաքարը, պոպոքը և շորում փաթաթելով, դնում մանկան բերանը, վոր նա լոի և իրենց չխանգարի։

Դա անթուղատրելի մի քայլ ե, վոր պետք
ե վերացնել միանգամից, մանավանդ աժառը,
լերը մայրը պիտի գնա դաշտալին աշխատանքի,
ոգտվում ե այդ միջոցով:

Ի՞նչ ե զրա հետևանքը: Բոլորիդ հայտնի յե,
վոր մեր ատամների արանքում շատ կեղտ ե հա-
վաքվում, և լերը հացը ծամում եք, այդ կեղտը
խառնվում ե հացի հետ: Բացի ատամների կեղ-
տից զանազան կոկորդի հիվանդություններ,
թոքախտը, սիֆիլիսը, դիֆտերիտը, ծամած հա-
ցի միջոցով անցնում են լերեխայի բերանը: Այդ
կեղտը վարակում ե յերեխայի բերանը, զանա-
զան հիվանդություններ առաջ բերում, շատ ժա-
մանակ ել մահվան պատճառ դառնում:

Բացի այս բոլորից, ալդպիսի «ՃՃակը» ծճե-
լու համար յերեխայից մեծ ուժ ե պահանջվում,
և նա հոգնում ե, թուլանում:

Նույնն ե և դատարկ սոսկան (ՃՃակը): Նա
կեղտոտվում ե, փոշին, ճանձերը նստում են
նրա վրա և վերջը հիվանդացնում յերեխային:

Շատ ժամանակ ել մայրը կամ տատը առաջ
իրենց բերանն են տանում ՃՃակը, թրջում,
իսկ հետո դնում մանկան բերանը:

ՃՃակը բոլորովին ավելորդ ծախս ե ըն-
տանիքի համար: Յեթե յերեխան կուշտ լինի,
նրան չկծեն մոծակները, վոշիլը, լուն, ճան-

Ճերը և թախտաբիթին, նա լերբեք անտեղի լաց չի լինիլ, նրան հարկավոր է ժամեմամ կերակրել՝ որը 5—6 անգամ, տակի փաթաթառը շուտ-շուտ փոխել, մաքուր ոդ տալ շնչելու համար, հաճախ լողացնել, յեզ նա լաց կլինի միայն կերակրելուց 2—3 ժամ հետո, լերբ նրա ստամոքսը դատարկվում ե:

Յերեխալին կերակրելիս շատ մայրեր հաճախ գդալը տանում են իրենց բերանը, համը կամ տաքությունը տեսնում, հետո նույն գդալով շարունակում կերակրել յերեխալին:

Այդպես չպետք ե անել, այլ համը փորձել ուրիշ գդալով, իսկ յերեխային կերակրել մաքուը լվացած գդալով:

Գլուղերում սովորություն կա ապուրը ուտել մեկ ամանից: 5—6 հոգի նստած ուտում են նույն ամանից, և յեթե նրանց մեջ կա հիվանդ, նա նախ և առաջ վարակում ե յերեխային:

Մանկան շիշը, գդալը, ափսեն յեզ ամեն ինչ պահիր առանձին:

Բացի այս պատճառներից կան մի շարք այլ պատճառներ, վոր մեռնող յերեխաների թիվը ավելացնում են:

Որինակ՝ մի հին ու վատ սովորություն, պառավխերը ջահելներին ստիպում են մանկանը

խաշխաշ տալ, վոր նա հանգիստ քնի, իրենց ել
չխանդարի:

Խաշխաշը մեծերին և թունավորում, ուր
մնաց փոքր մանուկներին: 1924 թվին յերկու
յերեխա բերում են հեռու գյուղերից և
գրվում Յերեանի կոնսուլտացիայում: Հարցու-
փորձից պարզվում է, վոր սկեսուրը, հակառակ
հարսի ցանկության, 1 $\frac{1}{2}$ տարի խաշխաշով և
պահել յերեխային: Յերեխաներից մնացել եյին
վոսկորն ու կաշին, և չնալած նրան, վոր կոնսուլ-
տացիան շատ միջոցներ ձեռք առավ փրկելու
այդ մանուկներին, բայց այդ նրանց չհաջողվեց.
յերկուսն ել մեռան. այդ կնոջ կոնսուլտացիան
պետք եր դատի տար, բայց նա անհետացավ:

Այ թե ինչպես են դարսվում իրար վրա
այն պատճառները, վոր մանուկներին տանում
են զերեզման:

Ի՞նչպես ե վնասում խաչխաչը, նա կա-
մաց-կամաց թունավորում յերեխային, քըմ-
րեցնում նրա ուղեղը, խանգարում նրա սեծա-
նալուն, քուլացնում նրան, փչացնում ախոր-
ժակը և այլն և այն:

Իսկ շատերը կարծում են, թե խաշխաշը հան-
գըստացնում եր յերեխային:

Ինչպես որորելը, ճոճելն և բթացնում յերե-
խային, այնպես ել խաշխաշը: Բայց խաշխաշի

թուլնը մնում ե յերեխայի մեջ, վարակում և
վնասում նրան։ Խույս տվեք արդպիսի քայլից.
դա կսպանի ձեր յերեխաներին։

Բոլորդ ել զիտեք, վոր ստամոքսի հիվան-
դությունը ուժեղանում ե ամառվա ամիսներին։
Փորհարինքը, լուծը, մանկական խոլերան ա-
մառը շատանում ե։

Հիվանդացող և մեռնող մանուկների թիվը
ել ամառը մեծանում ե։

Ինչո՞ւ ամառը շատ են մեռնում մանուկ-
ները, ի՞նչն ե պատճառը— իհարկե մեր տգի-
տությունը։

Յեթե մենք տգետ չլինեյինք, կիմանայինք,
վոր ճանճերը և փոշին ամառը մեծ վնաս են
տալիս։ Հիվանդությունների մեծ մասը տա-
րածվում ե սրանց միջոցով։

Մի հասարակ որինակ. յերեխայի կերակրի
մացորդի, կեղտոտած փաթաթաշորի կամ կըղ-
կըղանքի վրա նստում ե ճանճը։ Հետո ճանճը թըռ-
չում ե, նստում առողջ յերեխայի իրերի վրա և
թաթերով վարակում թե ափսեն, թե կերակուրը
և թե նույնիսկ յերեխայի բերանն ու ձեռքերը։
Վորոշ ժամանակից հետո յերեխան վարակվում
ե և հիվանդանում։ Ահա ճանճի վնասը։ Կոտորեն
նաներին, վոր չշատանան։ Երանց հետ սիասին
շատանում են յեվ հիվանդությունները։

Ցեթե հիվանդության սկզբից բժշկի չդիմես, հիվանդը քանի գնա կծանրանա. շատ ժամանակ ել մանուկը մեռնում ե տգետ տատմոր ձեռքիցը։ Մի լսեք տատմերների խորհրդին։

Մեր գյուղերում ալառավների խորհուրդներին դեռ լսող կա։ Զպետք ե լոել այդ չարամիտ պառավներին։ Չե վոր նրանք տգետ են, անզրագետ և վնասից բացի վոչ մի ոգուտ չեն տա։ Բոլորից շատ տատմերը վնասում ե ծննդկանին յեվ նոր ծնվող մանուկներին։

Հայտնի գիտնականներ ասում են, վոր մինչև 2 տարեկան հասակը յերեխան չպետք ե մեռնի։ Իսկ մենք ի՞նչ ենք տեսնում. տասնյակ հազարավոր նոր ծնված մանուկներ մեռնում են իրենց տատմոր ձեռքին։ Գյուղում, յերբ սկսվում են կնոջ ցավերը, տատմերն արդեն դռան տակը կանգնած, սպասում ե իր «յուղալի կտորին»։ Նա վերջին աղքատին ել կպլոկի իր «արած աշխատանքի» համար, իսկ թե կենդանի կմնան մայրն ու մանուկն, այդ նրան այնքան ել չի հետաքրքրում։ Ռուսաստանի թվերը մեզ ասում են, վոր տարեկան միլիոնից ավելի կանայք ու յերեխաներ զոհ են գնում տգետ տատմերներին։

Հետամնաց գյուղում տատմորը կանչում են և հիվանդի վրա։ Յեվ ի՞նչ ոգուտ։

Նա սկսում ե հիվանդի վրա «սուրբ ջուր»

թանել, աղոթել, խաչերի և սրբերի տակ տանել, վախեցնել լեռեխային և այլն և այլն...

Նա «մհլամ» ել գիտի պատրաստել, բայց ինչից... վերցնում ե զանազան ծաղիկներ և խոտ առանց նըանց քննելու և հասկանալու... և պատահում ե, վոր դրանք թունավոր են լինում, և հիվանդը մահանում ե:

Տատմերը վոչ մի հիվանդութուն բժշկել չգիտե և չարչարելով հիվանդին՝ գելեզման և ճանապարհում:

Նըա կեղտոտ ձեռքերն ու շորերը, լերկար յեղունկները՝ կեղտով լիբը, և ամեն մի շարժում միայն վսաս են բերում ծննդկանին և հիվանդին։ Դա լել գլխավոր պատճառներից մեկն ե, վոր ծնվելու առաջին որը բոլորից շատ են մեռնում մանուկները։

Շատ ժամանակ ել պառավերը յերեխալի զանազան մասերից (վզից, թևից, մազերից) կախ են տալիս ծանը ու կեղտոտ թալխաման, հուլունք և ուրիշ իրեր։ Նըանք դրանով մանկանը իբրև թե պաշտպանում են «չար աչքից»։

Դա լել սխալ ե. Վոչ մի բան չի կարող փրկել հիվանդ յերեխային, բացի խելացի խընամֆից յեվ բժշկությունից։

Հաճախ պատահում են մանուկներ յերկար ու կեղտոտ մազերով և յեղունկներով։ Յերբ

մորը դրա մասին հարցնում եա, ասում ե՞ և Պառավիշերն ասում են, վոր սատանաները կչարչարեն յերեխային», կամ «Յոթ տարի յերեխա չեմ բերել, ինչպես կտրեմ մազերը»:

Այ թե վարքան սխալներ ունենք մենք։ Առաջինը - յեթե յոթ տարի յերեխա չի յեղել, դա նշանակում ե՞ վորոշ հիվանդություն ե ունեցել և սկստք ե բժշկի դիմեր։ Յերկրորդ՝ յերկար, կեղտոտ յեղունկն ավելի վնաս ե, քան կտրած, կարճ յեղունկը։ Յերկար յեղունկով յերեխան ճանկում ե իր մաշել։ Յերկար յեղունկը կարող ե պոկ գալ, կուլ գնալ և մսասել յերեխային։ Վերջապես նրա տակի կեղար կարող ե գարակել յերեխային։

Յերկար ու կեղտոտ մազերը դժվար են մաքրվում, և նրանց մեջ բուն են դնում վոջիլը և անիծը։

Հանախ կտեցեմ ձեր յերեխայի յեղունկներն ու մազերը։

Սկզբից յես մեկ-մեկ հաշվեցի այն բոլոր պատճառները, վորոնք վատ են աղդում մեծացող յերեխայի վրա և հաճախ մահվան պատճառ դառնում։

Հիմա տեսնենք, թե վոր հիվանդությունն ե ավելի տարածված յերեխաների մեջ։

Յես վերևն ել շեշտեցի, վոր վորհարբինքից

շատ մանուկներ են մահանում. մանավանդ ամառ՝ հունիս, հուլիս յեվ ոզոսոս ամիսներին մանուկները միքանի անգամ տվելի յեն մեռնում, քան ձմեռը:

Դուք յերեխ նկատել եք, վոր յեթե գլուղի վորեե ընտանիքում մեկը հիվանդացավ—դրանով չի վերջանում:

Մեկ-յերկու շաբաթիցնույն հիվանդությունն ընկնում ե մի ուրիշ ընտանիք, հետո յերրորդ, չորրորդ, հինգերորդ... Տեսնում ես՝ մեկը մյուսի յետեից հիվանդանում են, ինչպես այս տարի քութեշից:

Ինչո՞ւ յե սարածվում հիվանդությունը,

Պետք ե ասել, վոր հիվանդությունների մեծ մասը վարակիչ ե: Հիվանդությունը տարածվում ե փոշու, ճանճերի, մարդկանց, ամանների, խաղալիքների և ասեն ինչի միջոցով: Հիվանդին առողջից պետք ե բաժանել, վոր առողջն ել չհիվանդանա:

Նրա հագուստը, կղկղանքը, կերակրի մնացողը պետք ե այնպես հեռացնել, վոր առողջը ձեռք չտա և չվարակվի:

Այս բոլորը պետք ե ասել և փորհարինքի մասին:

Իսկ ինչո՞ւ փորհարինքը բոլորից շատ ամառն ե սարածվում:

Վորովհետև ամառվա շոկը՝ փոշին, ճանձերը, մրգեղենը—բոլորը նպաստում են հիվանդության տարածվելուն։ Թվերը մեզ ցույց են տալիս, վոր վորբան ուզ է լինում ամառը, այնինքան շատ յերեխա յէ հիվանդանում յեվ մահանում։

Վորքան անձրեստ լինի ամառը և հով, այնքան հիվանդությունների թիվը պակասում է։

Զմեռը փորհարինքը պակասում է, վորովհետև այդ բոլոր պայմանները չքանում են։ Փորհարինից ավելի շատ մահանում են այն յերեխաները, վոր ծիծ չեն ստացել։

Մոր կարը պահպանում է մանկանը հիվանդություններից։

Ռուսաստանի թվերը ցույց են տալիս, վոր կովի կաթով մեծացած լերեխաները 7 անգամ շատ են մեռնում, քան մոր ծծով կերակրվածները։ Ցեթեւ յերեխան մոր ծիծ ե ստանում, նրա հիվանդությունը հեշտ ե անցնում։

Ամառը մանկանը ծծից չկտրե՛ք։ Մանկանը մինչեւ 6 ամիսը կերակրե՛ք միայն ծծով։ Վեց ամսից հետո, միայն բժշկի կամ կոնսուլտացիայի խորհրդով, ուրիշ ուտելիք տվեք յերեխալին։

Զմեռն ել իր հետ ուրիշ հիվանդություններ ե բերում թոքերի բորբոքում, կարմրուկ,

քութեց, կապուլտ հազ, դիֆտերիտ, տիֆ, գրիպտ և այլ հիվանդություններ, վորոնք տանում են հարլուրավոր մանուկ հասակներ:

Այդ վարակիչ հիվանդություններն ավելի շատ են պատահում մեկ տարուց մինչև 5—6 տարեկան հասակը:

Պառավխերը միշտ ասում են, վոր կարմրուկով անպայման բոլոր մանուկները պիտի հիվանդանան: Բայց նրանք չեն հասկանում մի բան. չե՞ վոր մեկ տարեկան յերեխան կարմրուկից ավելի շատ կտուժի, քան 5—6 տարեկանը:

Կարմրուկից մինչեվ մեկ տարեկան հասակը շատերը մեռնում են, իսկ մեկ տարուց բարձրը՝ վոչ:

Վորքան յերեխան մեծ ե, այնքան կարմըրուկը հիշտ ե անցնում:

Պետք ե աշխատել, վորքան կարելի յե, փրկել մանուկներին կարմրուկից, և դա հնարավոր ե:

Մենք գիտենք չքավոր մալրեր, վորոնք հեռացել են այն գյուղից, ուր կարմրուկը և կապույտ հազն ուժեղ կերպով տարածված են յեղել: Նրանք իմանալով, վոր այդ հիվանդությունները քանի գնում, այնքան տարածվում են, հեռացրել են իրենց յերեխաներին, վոր նրանք ել չկարակվեն:

Այդ հիվանդություններն անպայման պետք է բժշկել բժշկի միջոցով յեվ վոչ թե սատոր կամ ՏԵՐՏԵՐԻ:

ՏԵՂԸ ԸՆԿԱՎ, պետք և միքանի խոսք ել ասել տերտերների մասին:

ՏԵՐՏԵՐՆ իր «ՍՈՒՐԲ ԽԱՀՈՎ ու ավետարանով» շատ և տարածում հիվանդությունները: Այ, վերցրեք խոլերայի տարին: ՏԵՐՏԵՐՆԵՐԸ պատարագ եյին կաղմակերպում, հավաքում ամբոխը և խաչ ու ավետարան համբուրել տալիս:

Դուք զիտեք՝ խոլերան սաստիկ վարակիչ ե: ՅԵՄԵ մեկի թուքն անցնում ե մյուսին, նա վարակվում ե: Յերբ սկսում են խաչ ու ավետարան համբուրել իրար լետեից միքանի հարյուր մարդ, իհարկե, նրանք վարակվում են իրարից. և վերջը, խոլերան սլակասելու փոխարեն ուժեղացավ, մինչև բժշկությունը իրեն գործը չարեց:

Բոլորիդ ծանոթ ե մեր սովորությունը: Յերեխան վոր ծնվեց, պետք ե տերտերը կնքի: Ծանոթ ե ձեզ և այն բանը, վոր վորքան հիվանդ և թուլ ծնվի յերեխան, այնքան շուտ պետք է կնքելնրան, վոր անկնունք կամ «հարամ» չմեռնի յերեխան:

ՏԵՐՏԵՐԸ ՀՃՈԿԵԼՈՎ և ՀԿԵՄԱՔՐՔՐՎԵԼՈՎ, ԹԵ ինչով ե հիվանդ յերեխան, կոխում ե նրան

սառը և կեղտուտ ավագանի մեջ։ Այդ ավագանը յերբեք չի ախտահանվում, յեվ նիվանդ յերեխաները մեկը մյուսից նետո շարունակ վարակում են յեվ վարակվում այդ ավագանում։

Թույլ ծնված մանուկների մեջ մեծ չափով սիֆիլիսով և աչքի տրիպպերով (սուսանակով) հիվանդ յերեխաներ կան։ Տրիպպերոտ յերեխայի աչքերը թարախոտում են, և այդ թարախը մնում ե ավագանի ջրի մեջ։ Հետեւյալ յերեխան վարակվում ե այդ աչքացավով և յեթե չի բժըշկվում, կուրանում ե։ Այդ աչքացավից կուրացած յերեխաներ շատ կան։ Ցերք նոր ծնված յերեխային ընդունում ե մանկարարձուհին, նա կաթիլ ե զցում յերեխայի աչքերը, վոր հետո չցավեն և չկուրանան։ Կոնսուլտացիան ձեզ արգելում ե մանկան տաշտակում նույնիսկ մանկան հինց իրեն շորերը լվանալ, իսկ դուք թույլ եք տալիս մեկ ավագանում միքանի հազար մանուկ լողացնել։

Լողացրած յերեխային անլվա շորերում փաթաթում և տանում են տուն։ Ճանապարհին շատերը մըսում են և հիվանդանում կամ մահանում։ Ահա թե ինչ սարսափելի հետեւանքներ ե տալիս «սուրբ ավագանը ու մեռնը»։

Ժամանակ ե, վոր գեղջկուհին հասկանա

«սուրբ կնունքի» վատաները և հրաժարվի այդ ձեի
կնունքից:

Ինչո՞վ ե պակաս մեր կարմիր կնունքը.
Սա յե՞վ ձրի յե, յե՞վ մախուր, յե՞վ ուրախ, յե՞վ
անվնաս:

ԶԵՐ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊՄԱԿԵՐԱՊԵՑԵՔ
ԿԱՐՄԻՐ ԿՆՈՒՆՔ:

Ահա թե վորքան պատճառներ կան, վո-
րոնք խլում են մեզնից հազարավոր մատաղ
կյանքեր:

Այդ պատճառները համարյա բոլորը մեզ-
նից են կախված, և մենք պետք ենք սրանց վերջ
տանք:

Յերեխա մեծացնելու համար պետք ենք սրան
խնամելու որենքներին ծանոթ լինել:

Այդ որենքը դուք կգտնեք զրբումը:

Դրա համար դուք պետք եք զրագետ լինեք:

Գեղջկունի! յեթե գրագետ չես, վերացրու քո
անգրագիտությունը, սովորի՛ր:


Վորքան շատ գրագետ մայրեր ունենան,
այնան քիչ մանուկ կմեռնի:

Սովորելով դու կիմանաս, թե վորն ե վսաս
կամ ոգուտ քո յերեխային:

Գեղջկուհի, պահանջիր մսուր և կռնսուլտացիա քո գլուղի համար, մասնակցիր և աշակցիր դու ինքդ այդ հարցում:

Կռնսուլտացիան կոգնի քեզ քո լեռեխալին լավ և առողջ մեծացնելու:

Նրանք մեռնող յերեխաների թիվը համարյա կիսով չափ պակասեցնում են:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039032

(004)

ԳԻՆՅ 10 ԿՈՊ. ՄԱՍ. (1 մամուլ)

A 1
3923



Др. А. Аллахвердян

Почему детей умирает больше

Госиздат ССР Армении
Эревань—1930